ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

31 ՄԱՐՏԻ 2021 թ.

№ 4 (1068)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 55-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՌԱՆՑՔՈՒՄ ՄՈՍԿՈՎՅԱՆ 100-ԱՄՅԱ ՊԱՅՄԱՆԱԳԻՐՆ ԷՐ

Մարտի 18-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում տեղի ունեցավ ԳԱԱ Պատմության ինստիտուտի և Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի «Հայաստանը 1920-1991 թթ.-ին» գիտական լաբորատորիայի կազմակերպած կլոր սեղանը՝ նվիրված 1921թ. մարտի 16-ին Մոսկվայում Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության և Թուրքիայի Ազգային մեծ ժողովի ներկայացուցիչների միջև ստորագրված պայմանագրի 100-ամյակին:

Ինչպես գիտենք, 1920 թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի միջև կնքված հաշտության պայմանագրով ավարտվեց հայ-թուրքական պատերազմը: Ըստ Ալեքսանդրապոլի պայմանագրի, Թուրքիայի պարտադրանքով Հայաստանը հրաժարվում էր Սևրի դաշնագրից: Պայմանագրով Թուրքիային էին անցնում Կարսի մարզը և Սուրմալուի գավառը: Սուրմալուի գավառը երբեք չէր եղել Թուրքիայի կազմում: Նախիջևանի մարզը նույնպես անցավ Թուրքիայի հովանու տակ և շուտով հանձնվեց Ադրբեջանին: Հայ-թուրքական պետական սահմանը դարձան Ախուրյան և Արաքս գետերը:

1921թ. մարտի 16-ին Մոսկվայում կնքված պայմանագրի համաձայն Թուրքիայի հյուսիսարևելյան (ՀՍԽՀ-ի հետ) սահմանն անցնում էր Ախուրյան ու Արաքս գետերի հունով՝ թուրքական կողմում թողնելով Կարսի մարզը և Սուրմալուի գավառը: Նախիջևանի մարզը դառնում էր ինքնավար տարածք՝ Ադրբեջանի խնամակալության ներքո, որը չէր զիջվելու երրորդ պետության, ինչը Հայաստանի դեմ էր ուղղված: Մոսկվայի պայմանագրով Խորհրդային Հայաստանի տարածքը կազմում էր 29 հազար քառակուսի կիլոմետր (Լոռու և Զանգեզուրի միանալուց հետո), որը նախատեսում էր ավելի մեծ տարածք, քան Ալեքսանդրապոլի պայմանագիրը:

Կլոր սեղանի կազմակերպիչները վերոհիշյալ խնդրի շուրջ քննարկումներին մասնակցելու էին հրավիրել հայ անվանի գիտնականների, ակադեմիկոսների, դոկտոր, պրոֆեսորների, ՌԴ-ից հրավիրված բանախոսների՝ «Միջազգային վերլուծություն» ամսագրի գլխավոր խմբագիր Սերգեյ Մարկեդոնովին, պատմական գիտությունների դոկտոր Ալեքսանդր Կռիլովին, Հետխորհրդային հետազոտությունների փորձագետ Վադիմ Մուխանովին, Ուրալի Դաշնային համալսարանի «Պատմության ֆակուլտետ» դեպարտամենտի տնօրեն Ալեքսանդր Պալկինին, Ուրալի Դաշնային համալսարանի Ռուսաստանի պատմության ամբիոնի վարիչ Սերգեյ Սոկոլովին:

ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը ողջունեց Մոսկվայի պայմանագրի 100-ամյակին նվիրված կլոր սեղանի մասնակիցներին և ասաց, որ այս օրերին գիտական ժողովներ են կազմակերպվում, անց են կացվում գիտական քննարկումներ, այդ թեմայով ստեղծվել է գիտական լուրջ գրականություն:

«Գիտնականները տարբեր մոտեցումներ են հանդես բերել քննարկող թեմայի շուրջ, որը բավականին զգայուն թեմա է հայերի համար, և այսօր կուզեինք լսել մեր ռուս գործընկերների՝ պատմաբանների և քաղաքագետների կարծիքը»,-ասաց պատմաբանը: Նա ընդհանուր գծերով ներկայացրեց Մոսկվայի պայմանագրի վավերացման նախապատմությունը, թե ինչպես Ադրբեջանի խորհրդայնացումից հետո Ռուսաստանի բոլշևիկյան կուսակցությունը քեմալական Թուրքիայի հետ բարեկամացավ, և վերջինս ստացավ Խորհրդային Ռուսաստանի աջակցությունը՝ հայկական տարածքների կորուստների հաշվին: Ռուսաստանի և Թուրքիայի միջև բարեկամությունը հաստատվեց 1921 թվականի մարտի 21-ի մոսկովյան պայմանագրով:

Համանախագահողի կարծիքով ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Ռուսաստանը կարող էր նոր մոտեցում ցուցաբերել այս պայմանագրի շուրջ: Ցավոք այսօր էլ հայտնի է ՌԴ պաշտոնական շրջա- ➤2

Գիտական խորհրդի նիստում

Կայացավ Մանկավարժական համալսարանի Գիտական խորհրդի տարեվերջյան ընդլայնված նիստը, որը հետաձգվել էր՝ համավարակի պատճառով:

Ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը հանգամանորեն ներկայացրեց նախորդ տարվա ընթացքում հեռավար ուսուցման կազմակերպման առանձնահատկությունները՝ նշելով, որ թեև ոչ լիարժեք, բայց հնարավորինս արդյունավետ է կազմակերպվել ուսումնական պրոցեսը: Առողջության պահպանման տեսանկյունից ռեկտորը դրական համարեց նաև ուսումնական գործընթացի ներկայիս ձևը՝ հեռավար և առկա ուսուցման զուգակցմամբ:

«Ուսանողների կողմից ունենք բևեռային մոտեցում՝ հատկապես մագիստրոսները, որոնք ուսմանը զուգահեռ աշխատում են, կողմ են հեռավար ուսուցմանը, իսկ արվեստի գծով մասնագիտությունների մի շարք ուսանողներ կողմ են միայն առկա ուսուցմանը: Ելնելով ստեղծված իրավիճակից՝ որդեգրել ենք մոտեցում, երբ ֆակուլտետն իր մասնագիտական ուղղվածությամբ պայմանավորված, ընտրում է ուսուցման ➤3

ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ

Իջնում է գիշերն անգութ ու մթին,
Եվ այգը բացվում դառն ու մահահոտ,
Բայց հրկեզ հոգիս մորմոքում այս տոթ
Հավատում է դեռ քո առավոտին:

Թող կիտվի խավարն ավելի խրթին,
Եվ չարխինդ ճնշե հողն իմ արյունոտ,
Ու թող գա՛, թե կա, ավելի չար բոթ,
Մեխվի զոհ - երկրիս անարգված սրտին:

Ուխտավոր անդուլ, դարերի ժառանգ
Մի հեգ նահրցի՝ գնում եմ անկանգ.-
Թող գուժկան գիշերն ահասաստ դավե-
Որքան մութը սև՝ այնքան ես համառ,
Երկնի՛ր, իմ երկիր, հավատով անմար,
Սուրբ է քո ուղին և պսակդ՝ վեհ...

ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՌԱՆՑՔՈՒՄ ՄՈՍԿՈՎՅԱՆ 100-ԱՄՅԱ ՊԱՅՄԱՆԱԳԻՐՆ ԷՐ

➢1 նակների մոտեցումները այս պայմանագրին, դա նաև հասկանալի դարձավ, երբ Ռուսաստանի դեսպանը Անկարայում 100-ամյա պայմանագիրը համարեց «բարեկամական»:

Պատմաբանն անդրադարձավ երկու պետություններ-ի շահերին, որոնք հանգեցրին նման պայմանագրի ստեղծման հանգուցալուծմանը, ապա հարց ուղղեց ռուս գործընկերներին՝ արդյո՞ք 2021 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ համաձայնությունը կապ ուներ մոսկովյան պայմանագրի հետ:

ՀՊՄՀ ռեկտոր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռուբեն Միրզախանյանը ցավով նշեց, որ այս օրերին մոսկովյան պայմանագրի շուրջ բազմաթիվ քննարկումներ են տեղի ունենում, որոնք չեն պարունակում մասնագիտական մոտեցումներ: Այդ տեսանկյունից ռեկտորն ընդգծեց, որ առաջատար մասնագետների մասնակցությամբ ներկա կլոր սեղանի շուրջ քննարկումը բացառիկ իրադարձություն է:

Խոսելով մոսկովյան պայմանագրի մասին՝ ռեկտորը հիշեցրեց Չիչերինի, Մոլոտովի մոտեցումները, որոնցով հրապարակայնորեն բարձրաձայնվել է պայմանագրի անարդարացի լինելու մասին:

«Այսօր հավաքվել ենք միասին վերլուծելու պատմական այդ փաստը, և մենք ևս պարտավոր ենք բարձրաձայնել պատմական անարդարության մասին, ասել ողջ ճշմարտությունը»,-ընդգծեց ռեկտորը՝ շեշտելով, որ նման մակարդակով արված հայտարարությունները չէին կարող պատահականություն լինել: Միմյանց դեմ 13 պատերազմ վարած երկրների՝ Ռուսաստանի և Թուրքիայի մասին խոսելիս, պետք է հիմնվել պատմական ճշմարտության վրա:

Ռեկտորը մի շարք հարցադրումներ արեց, միաժամանակ ընգծեց, որ կա մի մեծ պատմական ճշմարտություն՝ յուրաքանչյուր պետություն ներկայացնում է իր շահերն ու հետաքրքրությունները, և որ պետք է ազգային-պետական շահերը համընկնեն: Կարևորելով գործընկերների վերլուծությունները՝ նա ռուս պատմաբաններին ու քաղաքագետներին հրավիրեց անկեղծ երկխոսության:

Քննարկվող խնդրի շուրջ իր տեսակետներն արտահայտեց Մոսկվայի «Միջազգային վերլուծություն» ամսագրի գլխավոր խմբագիր Սերգեյ Մարկեդոնովը: Նա թեման համարեց ակտուալ՝ ասելով, որ պետք է գտնել անցյալի այնպիսի փաստեր, որոնց միջոցով կարելի է հասնել խնդրի մերօրյա լուծմանը:

Սերգեյ Մարկեդոնովը կարծում է, որ պատմական անցյալում պետք չէ փնտրել պետությունների վարքագծերի մոդելներ և փորձել ներկան ընկալել դրանց լույսի ներքո. «Չի կարելի դատել 1921 թվականի մասին 2021 թվականի դիրքերից: Դաշնակիցները պետք է կարողանան անկեղծ խոսել միմյանց հետ, և բնական է, որ դաշնակիցների միջև ևս պետք է լինեն ճշգրտման ենթակա հարցեր և հակասություններ: Հատկանշական է, որ Հայաստանի և Ռուսաստանի գիտական հանրության ներկայացուցիչների կողմից Մոսկվայի պայմանագիրն ընկալվում է միանգամայն տարբեր կերպ: Եվ սա բնական է, քանի որ համեմատելի չէ այդ պատմական իրադարձության ազդեցությունը Հայաստանի և Ռուսաստանի պատմական հիշողության վրա»:

«Մոսկվայի և Կարսի պայմանագրերի մասին խոսելիս պետք է հաշվի առնել, որ Անդրկովկասում գոյություն ունեին որոշակի ազգային պետությունների նախագծեր, որոնք տապալվեցին, իսկ այդ տապալմանը հաջորդեց խորհրդայնացումը: Պետք է հաշվի առնել, որ Մոսկվայի պայմանագրին նախորդել է հայ-թուրքական պատերազմը, որի ընթացքում թուրքերին հաջողվել էր հայտնվել Ալեքսանդրապոլում, և միայն այդ պայմանագրից հետո թուրքական զորքերը հետ քաշվեցին քաղաքից»,-ասաց Մարկեդոնովը՝ հավելելով, որ պատմական իրադարձության մասին խոսելիս պետք է հաշվի առնել ստեղծված իրավիճակի ընդհանուր դիալեկտիկան, որպեսզի չհանգենք պատմության հատվածային ընկալմանը:

ԳԱԱ ակադեմիկոս Ռուբեն Սաֆրաստյանն ընդգծեց, որ պայմանագիրը մինչ օրս գիտական վեճերի տեղիք է տալիս և հարցին անդրադարձավ թուրքական դիվանագիտության մոտեցումների տեսանկյունից: «Հայկական հարցը չլուծվեց հօգուտ Հայաստանի և հայերի, որովհետև այստեղ վճռորոշ եղավ Ստալինի դերը, այնինչ Ռուսաստանը կարող էր ավելի կոշտ լինել Թուրքիայի հանդեպ»,-հավելեց Ռուբեն Սաֆրաստյանը:

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կարեն Խաչատրյանն ընդգծեց, որ Մոսկվայի պայմանագիրն անհամեմատելի է դրանից 2.5 ամիս առաջ կնքված Ալեքսանդրապոլի պայմանագրի հետ, քանզի Մոսկվայի պայմանագրով երաշխավորվում էր Հայաստանի ինքնուրույնությունը, իսկ Ալեքսանդրապոլի պայմանագրով, Հայաստանը Թուրքիայի վասալություն էր դառնում՝ ճանապարհների վերահսկողությունն ամբողջությամբ հայտնվում էր թուրքական կողմի հովանու ներքո:

Մոսկվային հաջորդող Կարսի պայմանագրով բացառվում էր Ադրբեջանին հանձնված Նախիջևանի նկատմամբ երրորդ երկրի հավակնությունները, ասել է թե բացառվեց Թուրիքայի ազդեցությունը Նախիջևանի, հետևաբար նաև, Հարավային Կովկասի վրա, և այն դուրս մղվեց տարածաշրջանից՝ դիրքերը զիջելով Ռուսաստանին: Ցավոք, այսօր էլ, Ադրբեջանի թողտվությամբ, Թուրքիան որոշակի ռազմական և տնտեսական ներկայություն ունի Նախիջևանում, որը պետք է անհանգստացնի Ռուսաստանին:

«Ժամանակի համատեքստում պետք է հասկանալ կատարված իրադարձությունների ընդհանուր տրամաբանությունը»,-ասաց պատմական գիտությունների դոկտոր Ալեքսեյ Կռիլովը, հորդորեց 100-ամյա պատմական իրողությանը սթափ հայացքով նայել և գնահատականներ տալիս նկատի ունենալ ժամանակի հասարակական և քաղաքական իրողությունները:

Հետխորհրդային հետազոտությունների փորձագետ Վադիմ Մուխանովն ու իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Վոլոդյա Հովհաննիսյանը խոսեցին պայմանագրի իրավական կողմերի մասին: Նրանք շեշտեցին, որ կան հնարավորություններ՝ միջազգայնորեն լուծելու պայմանագրի չեղարկման հարցը:

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Խաչատուր Ստեփանյանը փաստեց, որ Ռուսաստանը մեր դաշնակիցն է, և մենք չունենք այլընտրանք, որ հայերի հզորությունը բխում է Ռուսաստանի շահերից: Ռուբեն Միրզախանյանն էլ նկատեց՝ նախևառաջ հայերի շահերից է բխում Ռուսաստանի հզորությունը, և ոչ թե մենք ենք ընտրում՝ ում հետ անենք բարեկամություն, այլ մեզ են ընտրում, ինչի համար համար խորհուրդ տվեց գնահատականներ հնչեցնելուց առաջ նայել քարտեզին: Այս հարցի շուրջ Սերգեյ Մարկեդոնովը զարմանալի է համարում այն տարածված թյուր կարծիքը, թե ռուս-թուրքական հարաբերությունների լարվածության բարձրացումը հայերի օգտին կլինի: Բնախոսը հակառակ կարծիքին է, որովհետև ռուս-թուրքական լարված հարաբերություններում առաջինը տուժելու է Հայաստանը, քանի որ ռազմական գործողությունների թատերաբեմը հենց Հայաստանն է լինելու:

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Էդիկ Մինասյանը խոսեց միջազգային իրադրության, Թուրքիայի նպատակադրումների, ռազմաքաղաքական դաշինքին նախորդած իրադարձությունների և պատմությունից դասեր քաղելու մասին:





Քարտեզագետ Տիգրան Բաբայանը ներկաների ուշադրությունը հրավիրեց Մոսկվայի և Ալեքսանդրապոլի պայմանագրերի հիման վրա պատրաստված քարտեզներին, որոնցում պարզորոշ երևում են ընդամենը 2,5 ամսվա տարբերությամբ կնքված հայ-թուրքական՝ Ալեքսանդրապոլի, և ռուս-թուրքական՝ Մոսկվայի համաձայնագրերի տարածքային տարբերությունները:

Կլոր սեղանի շուրջ բանավեճն ընթացավ բանախոսների կողմից իրատեսական վերլուծությունների ներկայացմամբ, տեսակետների հակադրումներով և համընկնումներով: Բոլոր ելույթ ունեցողներն ընդգծեցին, որ պատմական փաստերն ու իրողությունները պետք է համակողմանի և իրատեսական վերլուծության ենթարկել՝ հարցի արդար և ճշմարիտ հանգուցալուծմանը հասնելու համար:

ԿԼՈՐ ՍԵՂԱՆԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵՑԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

1921 թ. մարտի 16-ին Մոսկվայում ստորագրված պայմանագրի 100-ամյակի առիթով մարտի 18-ին ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի և Ռուսաստանի Դաշնության մի խումբ առաջատար մասնագետների հետ հրավիրված կլոր սեղան-քննարկման մասնակիցներին մարտի 19-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Հանդիպմանը ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը Նորին Սրբությանը ներկայացրեց հյուրերին և նախորդ օրվա քննարկման արդյունքները:

Հայաստանի և Արցախի համար դժվարին այս շրջանում նախաձեռնությունը օգտակար համարեց քննարկման մասնակից, «Միջազգային վերլուծություն» ամսագրի գլխավոր խմբագիր պ.գ.թ. Սերգեյ Մարկեդոնովը՝ անդրադառնալով նաև արցախյան պատերազմի հետևանքներին և տարածաշրջանում առկա մարտահրավերներին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գոհունակությունն արտահայտեց կարևոր նախաձեռնության կազմակերպման առիթով՝ ընդգծելով նման պատմական իրադարձությունների համատեղ քննարկելու անհրաժեշտությունը՝ պատմական փաստերի վերհանման, ինչպես նաև երկու բարեկամ ժողովուրդների փոխգործակցության առավել սերտացման տեսանկյունից:

Նորին Սրբությունը խոսեց հայրենիքի կորստյան ցավի և առկա մարտահրավերների, միջազգային հանրության արձագանքի մասին՝ ընդգծելով ՌԴ իշխանությունների կողմից պատերազմական գործողությունների կասեցման և տարածաշրջանում խաղաղության վերահաստատման գործում ներդրած ջանքերը: Հայրապետը գոհունակությամբ տեղեկացրեց նաև, որ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի ու Մոսկվայի և Համայն Ռուսիո Կիրիլ Պատրիարքի ջանքերի շնորհիվ հնարավոր դարձավ Դադիվանքի հոգևոր կյանքի ու անխաթար աստվածպաշտության և սահմանամերձ վանքերի անվտանգության ապահովումը, նաև անդրադարձ կատարեց գրավված և հանձնված տարածքներում Ադրբեջանի իշխանությունների կողմից հայկական պատմական հոգևոր-մշակութային ժառանգության հանդեպ որդեգրված ռազմավարությանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի և հյուրերի միջև խոսակցություն ծավալվեց ղարաբաղյան հակամարտության կարգավորման, Արցախի հոգևոր և մշակութային ժառանգության պահպանության ուղղությամբ Մայր Աթոռի կողմից ձեռնարկվող քայլերի, ինչպես նաև Հայաստանի ներքաղաքական կյանքի զարգացումներին վերաբերող հարցերի շուրջ:

Գիտական խորհրդի նիստում

➢1 տարբերակը»,-նշեց ռեկտոր Միրզախանյանն ու ևս մեկ անգամ ընդգծեց՝ բոլոր մոտեցումներում պետք է ելակետային լինի առողջության պահպանումը:

Ռեկտորը ներկայացրեց նաև 2020 թվականի դրամական մուտքերի և ելքերի դինամիկան, բաշխվածությունը, ընդհանուր ուսանողների և 1-ին կուրսեցիների թիվը՝ ըստ տարիների, ինչպես նաև դրամական ելքերի բաշխվածությունն ու 2021-ի բյուջեի նախահաշիվը:

Բուհի նախորդ տարվա գործունեության մյուս մանրամասներն ամփոփված էին Մանկավարժական համալսարանի 2020 թվականի ընթացքում տեղի ունեցած իրադարձությունների մասին պատմող տեսաֆիլմում:

Գիտական խորհուրդը ներկայացված հաշվետվությունն ընդունեց ի գիտություն:

Ուսումնական գործընթացների գծով պրոռեկտոր Միհեր Մելիք-Բախշյանը ներկայացրեց 2021-2022 ուսումնական տարվա մագիստրոսի և բակալավրի ու անընդհատ և ինտեգրված ծրագրերի (առկա և հեռակա ուսուցման) մասնագիտությունների, քննությունների, տեղերի, ուսման վարձերի, նաև նախապատրաստական բաժնի ուսման վարձերի հարցը: Առկա բակալավրիատում ընդունելություն կիրականացվի 40 մասնագիտությունների գծով. հատկացված է 83 անվճար և վճարովի 1537 տեղ, իսկ հեռակայում՝ 31 մասնագիտությունների համար հատկացված է 1245 տեղ: Առկա մագիստրատուրայում ընդունելություն կիրականացվի 52 մասնագիտությունների գծով՝ 96 անվճար և 950 վճարովի տեղերի համար, իսկ հեռակա մագիստրատուրայում՝ 9 մասնագիտությունների գծով՝ 315 վճարովի տեղի համար:

Պրոռեկտորը հավելեց նաև, որ այս տարի նախատեսված է ընդունելության երկու քննություն, սակայն համավարակով պայմանավորված հնարավոր է լինեն փոփոխություններ: Նա հավելեց նաև, որ փոփոխություն է եղել ընդունելության կարգում. 1-ին փուլում դիմորդը կարող է նշել մեկ բուհ և մեկ մասնագիտություն, ապա կկազմակերպվի թափուր տեղերի համար լրացուցիչ փուլ: Միհեր Մելիք-Բախշյանը ներկայացրեց նաև նախապատրաստական բաժնի ընդունելության վերաբերյալ մանրամասները՝ նշելով, որ եռամսյա դասընթացներ կիրականացվեն 39 մասնագիտությունների գծով՝ 80 000 դրամ ամսական վճարով, օտարերկրյա քաղաքացիների համար՝ 420 000 դրամ:

Ուսումնագիտական գծով պրոռեկտոր Սրբուհի Գևորգյանը Գիտական խորհրդի անդամների հաստատմանը ներկայացրեց թեկնածուական ատենախոսությունների թեմաներն ու հրատարակության երաշխավորած գրքերը: Գիտական խորհրդի որոշմամբ, ՀՀ ԲՈԿ-ի կողմից ընդունելի պարբերականների շարքում ընդգրկված համալսարանի «Գիտական տեղեկագիրը» այսուհետ կհրատարակվի էլեկտրոնային պարբերականների ձևաչափով:

ՀՊՄՀ Պրակտիկայի կենտրոնի ղեկավար Վահան Սարգսյանը ներկայացրեց 2021-2025 թթ. ռազմավարական ծրագրի և գործողությունների կատարման պլանը. Գիտական խորհուրդն այն ընդունեց ի գիտություն:

ՀՊՄՀ Գրադարանի տնօրեն Տիգրան Պետրոսյանցը ներկայացրեց Արցախյան 3-րդ պատերազմում զոհված ուսանողների և շրջանավարտների հիշատակի հավերժացման միջոցառումների ընթացքն ու անելիքները: Գիտական խորհուրդն ընդունեց որոշումը, ըստ որի առաջիկայում բուհի Ալեք Մանուկյան 13 հասցեի մասնաշենքի բակում կբացվի հուշակոթող, կիրատարակվի արցախյան երեք պատերազմների մասնակից 310 համալսարանականներին նվիրված կենսագրական հանրագիտարան, Կուլտուրայի ֆակուլտետի 208-րդ արվեստանոցը կկոչվի ֆակուլտետի շրջանավարտ Ալեն Մարգարյանի անունով: Որոշվեց նաև շարունակել այցելությունները պատերազմում զոհված, մասնակից շրջանավարտների ընտանիքներին, հաշվառել նրան կարիքները, ընդառաջել համալսարանում սովորող նրանց հարազատներին:

Գիտական խորհրդի անդամները փակ քվեարկությամբ ներկայացված թեկնածուներ Արմինե Բաղդասարյանին, Անահիտ Դաշյանին, Ալինա Մանուկյանին, Ռուզաննա Ասատրյանին, Ռուզան Խաչատրյանին, Լիլիթ Գրիգորյանին, Կարինե Աղաբաբյանին, Դավիթ Հովհաննիսյանին, Սուսաննա Խաչատրյանին և Լիլիթ Իսկոյանին շնորհեցին դոցենտի գիտական կոչում:

Օտար լեզուների ֆակուլտետի դեկան Սրբուհի Լուլուկյանը ներկայացրեց Ջորջ Բայրոնի անվանական կրթաթոշակի հավակնորդ թեկնածուին: Ավանդույթի համաձայն՝ ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը շնորհավորեց նաև ամսվա հոբելյարներին:

Քրիստինե ՄԵԼՔՈՆՅԱՆ

«ԶԳԱՅՈՒՆ ԵՄ, ԲԱՅՑ ՌՈՄԱՆՏԻԿ ՉԵՄ»,

-ԱՍՈՒՄ Է ԴԵՐԱՍԱՆ ՍԱՄՎԵԼ ԹՈՓԱԼՅԱՆԸ

Հենրիկ Մալյանի անվան և Արմեն Մազմանյանի անվան «Գոյ» թատրոնների դերասան, Մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի դասախոս Սամվել Թոփալյանը մարտի 19-ին դասախոս Իրինա Պոնոմարենկոյի նախաձեռնությամբ հյուրընկալվել էր Սկզբնական կրթության ֆակուլտետի նախադպրոցական կրթության և մեթոդիկայի մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողներին: Սիրված դերասանի հետ հանդիպումը վերածվեց անկեղծ ու անմիջական երկխոսության:

Ուսանողուհիները տարբեր հարցեր ուղղեցին երիտասարդ դերասանին՝ կրթությունից մինչև խաղացած դերեր, կերտած կերպարներից մինչև կյանքի տարբեր իրադրությունների հանդեպ մոտեցումներ…

Սամվել Թոփալյանն ավարտել է Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտը և 2006 թվականից արդեն աշխատում է թատրոնում:

Երբ ուսանողները հարցրին «Լյուդվիգ անունով ոզնին» ֆիլմի համար ստացած մրցանակի մասին, դերասանն ասաց, որ մրցանակներն այնքան էլ չի կարևորում. դրանք նախևառաջ պարտավորեցնող են, ավելիին ձգտելու խթան, քան թե առավելություն:

Սամվել Թոփալյանին կինոյում գրավում է այն, ինչ չի արել, որովհետև «այստեղ հանդիպում է բարդությունների և հետաքրքիր է՝ ինչպես է դրանք հաղթահարում»:

Դերասանը միշտ պիտի աշխատի, սովորի, ներքին հոգեկան ապրումներից կարողանա անցում կատարել՝ կերպարների մեջ մտնելու համար, և այստեղ շատ կարևոր է նաև այն հանգամանքը, թե ինչպես ես կարողանում յուրաքանչյուր կերպարին հաղորդել քո զգացողությունները:

Ուսանողներին հետաքրքրում էր, թե «Կյանք ու կռիվ» ֆիլմում խաղալիս դժվա՞ր չէր արդյոք ժեստերի լեզվով խոսելը… Դերասանը պատմեց՝ ինչպես է նախապես սովորել ժեստերի լեզուն, ինչպես է ամենօրյա մարզումների միջոցով

«մտել հատուկ ջոկատայինի դերի մեջ», դա իսկապես հաճելի պրոցես էր…

«Կինոյում շատ չեմ խաղացել, ինձ ավելի հարազատ է թատրոնը, այնտեղ կերտած իմ կերպարները, որովհետև այնտեղ քեզ ոչ ոք չի խանգարում»,-ասում է Սամվելը և մի առանձին հպարտությամբ ընդգծում՝ իր խաղացանկում շատ է սիրում սարոյանական կերպարներին: Թեև բոլոր կերպարներն էլ իրենն են, դժվար է առանձնացնել որևէ մեկին: Հիշում է իր կուրսի ղեկավար Արմեն Մազմանյանի խստապահանջությունը. դա շատ կարևոր է դերասան դառնալու ճանապարհին: Իսկ առանց աշխատասիրության դժվար է հասնել նպատակների իրագործմանը:

Դերասանը պետք է աշխատի զինվորի կարգապահությամբ և իր մարմինը պահի մարզված վիճակում: Դերասանի համար շատ կարևոր է կենտրոնացումը մինչև բեմ բարձրանալը, պիտի կարողանաս կառավարել հուզմունքդ…Ինչու չէ, բեմում նաև լինում են արգելակման պահեր, բայց պիտի կարողանաս իրավիճակից դուրս գալ: Իսկ խաղընկերների հարցում բախտը բերել է՝ նրանք շատ լավն են, և դա բեմում խնդիրներ չունենալու լավագույն երաշխիքն է:

Անցանկալի, պատվիրված դերերից միշտ հրաժարվում է, որովհետև դերասան Սամվել Թոփալյանի համար սկզբունքային է բարոյական նորմերի սահմաններում մնալը:

Դերասանն աշխատում է նաև ուսանողների հետ, սիրում է նրանց, բայց մի բան չի հասկանում. ինչո՞ւ են նրանք անլուրջ վերաբերվում իրենց ընտրած մասնագիտությանը, ինչո՞ւ են ժամանակ վատնում օժիտի համար դիպլոմ ձեռք բերելու վրա: Պետք է սիրել մասնագիտությունը, անընդհատ կրթվել ու գիտելիքով զինվել՝ մեր երկրի հզորացման գործում սեփական լուման ներդնելու համար. «Պետք է հենց այնպես չվերցնես գիտելիքը, այլ այն անցկացնես քո վերլուծական մտքի միջով, որպեսզի կարողանաս ստացած գիտելիքդ ծառայեցնել մի կարևոր ու լավ գործի»:

Դերասանը նաև ցավով նկատեց, որ հայաստանյան հասարակությունն այսօր չարացած է, ինչը գալիս է մշակույթի պակասից… Նա ուսանողներին հորդորեց շատ կարդալ, այցելել թատրոններ, որպեսզի «ճանաչեք ձեր տեսակը»: Սեփական ազգը, գենը, տեսակը ճանաչելու առումով նա մեջբերումներ արեց Հովհաննես Թումանյանից, Խորենացուց, Համո Սահյանից… և հավելեց՝ մասրենու էությամբ մենք պիտի ճանաչենք մեզ: Մենք մեզ պիտի ճանաչենք արմատից՝ ասաց դերասանը՝ շեշտը դնելով հայրենաճանաչության վրա՝ որպես մեծամտանալու հակակշիռ:

Մասնագիտական խանդի մասին խոսելիս նա ժպտաց. «Նախանձը չկայացած և թերարժեքության բարդույթով տառապող մարդկանց է բնորոշ», և ինքը զերծ է դրանից, հավատարիմ իր տեսակին: Եվ սիրում է իր տեսակը, բայց դերասանական խաղի մեջ իր նկատելի ինքնավստահությունը զուտ դերային է: Իրական կյանքում այդքան էլ ինքնավստահ չէ, բայց ուզում է դաստիարակել ու ձևավորել իր մեջ այդ հատկանիշը:

Հայրենիքի, մեր երկրի ներսում տեղի ունեցող մերօրյա իրավիճակի մասին ցավով նկատեց, որ մենք անկախությանը պատրաստ չէինք և չկարողացանք նրա հետ ճիշտ վարվել: Բայց պարտավոր ենք լավատես լինել, հավատալ, որ Աստված մեզ համար ինչ-որ դուռ է բացելու, բայց ձեռքերը ծալած չնստել ու սպասել բախտին. պետք է աշխատել ու աշխատել, յուրաքանչյուրս մեր ոլորտում մեր գործը պիտի կարողանանք լավ անել՝ դուրս գալով սոցիալական՝ ինքնահաստատման ու ինքնադրսևորման հարթակներից:

Ցանկացած խնդիր թաքնված է և լուծելու համար պետք է սկսել պարզից, ոչ թե խորանալ գլոբալիզացայի մեջ. «Տեսա՞ք, թե ինչ խնդիրներ ունենք 100 տարի անց, մինչդեռ մենք մանր քայլերով պիտի հասած լինեինք դրանց լուծմանը»:

Այն հարցին, թե խաղացանկում կա՞ն դերեր, որոնք ստեղծում են տպավորություն, թե դերասան Սամվել Թոփալյանը ռոմանտիկ ու զգայուն անհատ է: «Զգայուն եմ, բայց ռոմանտիկ չեմ: Ես շատ իրատես մարդ եմ և կյանքին նայում եմ այդ հայացքով: Ինչ արած՝ ես այսպիսին եմ…»:

Մնում է հավելել, որ դերասանի հետ հանդիպումը ուսանելի դաս էր անկեղծ ու անմիջական միջավայրում, որ իր չկաղապարված ու չդասավորված օրակարգով ուսանողներին շատ բան հուշեց, նաև հորդորեց՝ սիրել թատրոնը և հաճախակի այցելել թատրոն՝ մոտիկից զգալու արվեստի ապրեցնող ուժը:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Անդառնալի կորուստ

Ցավով տեղեկացանք, որ կյանքից անժամանակ հեռացել է ՀՊՄՀ Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության պետ, Տնտեսագիտության և կառավարման ամբիոնի դոցենտ Մկրտիչ Ավագյանը:

Մկրտիչ Ավագյանն ավարտել է Երևանի Վ. Բրյուսովի անվան Լեզվահասարակագիտական համալսարանը՝անգլերեն և ֆրանսերեն լեզուների մասնագետ-ուսուցիչ որակավորմամբ, ապա ուսանել Չիկագոյի Իլինոյսի պետական համալսարանի Ամերիկյան հետազոտությունների բաժնում: Մ. Ավագյանն աշխատել է տարբեր ոլորտներում՝ ուսուցչից մինչև հաղորդավար-մեկնաբան, զբաղեցրել տարբեր պաշտոններ Վ. Բրյուսովի անվան Լեզվահասարակագիտական համալսարանում՝ որպես զարգացման գծով պրոռեկտոր, Օտար լեզուների ֆակուլտետի դեկան, ուսումնական բաժնի վարիչ:

Մկրտիչ Ավագյանը 2011 թվականից մինչ օրս Մանկավարժական համալսարանի կրթական բարեփոխումների և որակի վարչության պետն էր: Վերապատրաստվել էր աշխարհի մի շարք երկրներում և ձեռք բերած փորձն ու գիտելիքները ներդնում էր բարձրագույն կրթության բարեփոխումների իրագործման մեջ: Նրա անմիջական ղեկավարմամբ այդ տարիներին իրագործվել են կրթական ոլորտի տարբեր ծրագրեր, իրականացվել բարձրագույն կրթությունը ժամանակակից մարտահրավերներին համապատասխանեցնելու բարեփոխումներ:

Մկրտիչ Ավագյանը նաև փիլիսոփայական գիտությունների թեկնածու էր, դասավանդում էր ՀՊՄՀ Տնտեսագիտության և կառավարման ամբիոնում:

Հեղինակել է 30-ից ավելի գիտական հոդված և 3 դասագիրք, Մանկավարժական կրթության զարգացման հայեցակարգի համահեղինակն էր:

Վաստակաշատ մանկավարժի և արհեստավարժ ղեկավարի կորուստը մեծագույն ցավ է Մանկավարժական համալսարանի իր գործընկերների և ուսանողների համար:

Մանկավարժական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը ցավակցում է Ավագյանների ընտանիքին՝ Մկրտիչ Ավագյանի անժամանակ մահվան և անդառնալի կորստի կապակցությամբ:

«Հատուկ և ներառական կրթության խնդիրներն ու հեռանկարները»

ՀՊՄՀ Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի նախաձեռնությամբ անցկացվեց «Հատուկ և ներառական կրթության խնդիրներն ու հեռանկարները» խորագրով միջազգային գիտագործնական գիտաժողով: Գիտաժողովն անցկացվեց առցանց և առերես ձևաչափով. օտարազգի մասնակիցները զեկույցներով հանդես եկան առցանց, իսկ Հատուկ և ներառական ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմն ու ուսանողները՝ առերես:

Սանկտ Պետերբուրգի, Ղրիմի, Արխանգելսկի, Ղազախստանի, Ուկրաինայի, Ղրղզըստանի և Ուզբեկստանի գործընկեր բուհերի ներկայացուցիչներն իրենց զեկույցներում անդրադարձան ներառական կրթության արդի հիմնախնդիրներին, հատուկ և ներառական կրթության համակարգի զարգացման ուղիներին:

Հատուկ մանկավարժության ոլորտի առաջատար հաստատությունների ներկայացուցիչները խոսեցին նաև հատուկ կրթության գործընթացի կազմակերպման կարևորության և այդ համատեքստում զարգացման սահմանափակ կարողություններ ունեցող ուսանողների ուսումնառության համար հարմարավետ պայմանների ստեղծման, հատուկ և ներառական կրթության համատեքստում մի շարք այլ հարցերի մասին:

Մասնակիցները կարևորեցին միջազգային գիտաժողովի կազմակերպումը, ինչը տարբեր երկրների փորձի փոխանակման յուրատեսակ հնարավորություն է:

Թերթելով անցյալի էջերը

ՊԵՏՐՈՍ ԲԵԴԻՐՅԱՆ



2021 թվականի ապրիլին լրանում է նշանավոր հայ լեզվաբան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Պետրոս Բեդիրյանի 90-ամյակը:

Նա ծնվել է 1931 թ. ապրիլի 7-ին, Սիրիայի Հալեպ քաղաքում, Արևմտյան Հայաստանից տեղափոխվածների ընտանիքում: Նախնական կրթությունը ստացել է տեղի «Էմանուել» հայկական նախակրթարան-վարժարանում և ավարտելուց հետո սովորել է Հալեպի ֆրանսիական լիցեյում: 1943-46 թթ. Պ. Բեդիրյանը ուսում է ստանում Կիպրոսի Մելքոնյան կրթական հաստատությունում:

Պ. Բեդիրյանի կյանքի մեծ մասը՝ 1947 թվականից մինչև 1995 թվականն անցել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում (նախկինում՝ ինստիտուտ). 1947-ին ընդունվել և 1952-ին ավարտել է ինստիտուտը, 1952-1955 թթ. սովորել է ասպիրանտուրայում, այնուհետև՝ 1955-1995 թվականներին, սկսել է դասախոսական աշխատանքը, որի ընթացքում՝ 1955-1959 թ. եղել է ասիստենտ, 1960-1964 թթ.՝ ավագ դասախոս, 1964-1990 թթ.՝ դոցենտ, իսկ 1990-1995 թթ.՝ պրոֆեսոր:

Ականավոր գիտնականն իր թեկնածուական ատենախոսությունը պաշտպանել է 1956 թ., իսկ դոկտորականը՝ 1991 թ. և ստացել բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

Որոշ ժամանակ գործուղմամբ դասավանդել է նաև Կիպրոսի Մելքոնյան կրթօջախում:

1982-85 թթ. և 1989-90 թթ. Պ. Բեդիրյանը համատեղ աշխատել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում՝ դասավանդելով գրաբար և աշխարհաբար, 1995 թվականին վերսկսել է աշխատանքը մինչև 2008 թ.:

Լինելով գիտական հետաքրքրությունների լայն մտահորիզոն ունեցող անձ՝ Պ. Բեդիրյանն իր աշխատությունները նվիրել է ընդհանուր լեզվաբանության, դարձվածաբանության, բառագիտության և ստուգաբանության հարցերին:

Համալսարանում աշխատելու ժամանակահատվածում եղել է նաև «Մանկավարժ» թերթի առաջին խմբագիրը:

2008 թ. արժանացել է Հայաստանի վաստակավոր մանկավարժի կոչման, ինչպես նաև մի շարք պարգևների՝ «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» շքանշան (2004 թ.), ԽՍՀՄ «Պատվո նշան» շքանշան (1986 թ.), «Աշխատանքային արիության համար» հոբելյանական մեդալ (1970 թ.), ԽՍՀՄ «Խաչատուր Աբովյան» մեդալ (1981 թ.), ՀՀ ԿԳ նախարարության Ոսկե մեդալ (2011 թ.), ՀՀ սփյուռքի նախարարության «Ուիլյամ Սարոյան» մեդալ (2011 թ.), «Մանկավարժական համալսարան» մեդալ (2015 թ.):

Պ. Բեդիրյանի հեղինակած աշխատություններից են «Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն» (1973 թ.), «Ակնարկներ ժամանակակից հայերենի դարձվածաբանության» (2007 թ.), «Դարձվածաբանական բացատրական բառարան» (1971 թ.), «Ռուս-հայերեն, հայ-ռուսերեն բառարան» (1987 թ., համահեղինակ), «Հայերեն շրջասությունների բառարան» (2002 թ.) և այլն:

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի շրջանավարտ, համալսարանի դասախոս, բուհի կարկառուն ներկայացուցիչ Պետրոս Բեդիրյանի վերաբերյալ նյութերից պահպանվում և ցուցադրվում են համալսարանի պատմության թանգարանում:

Կարինե ՍՈՂՈՄՈՆՅԱՆ
ՀՊՄՀ պատմության թանգարանի գիտաշխատող

Մանկակցեցին երաժշտական հեռավար մրցույթի



Կուլտուրայի ֆակուլտետի երաժշտության ամբիոնի ուսանողները փետրվարի 15-ից մարտի 5-ը մասնակցեցին Կատարողական արվեստի համաշխարային ասոցիացիայի կողմից կազմակերպված «Տոկիո - 2021» Միջազգային հեռավար մրցույթին՝ արժանանալով պատվավոր առաջին մրցանակին:

Ամբիոնի դասախոս, դոցենտ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի արտֆոլկ կազմակերպության անդամ Սևադա Շհոյանի նախաձեռնությամբ և աջակցությամբ հերթական հաջողությունը գրանցվեց:

Քանոնահարուհի Սիլվա Միրիջանյանը կատարեց Երվանդ Երկանյանի «Տաղ աշնան» ստեղծագործությունը, իսկ ամբիոնի ուսանողներից բաղկացած խումբը հանդես եկավ Ազատ Ասլանյանի հեղինակային ստեղծագործությամբ:

Խումբը ներկայացնում էին քանոնահար Անի Պետրոսյանը, Նվարդ Ավետիսյանը, Դիաննա Զարոյանը, Նոնա Ղազարյանը, քամանչահար Լևոն Հարությունյանը, դուդուկահար Վաղարշակ Գրիգորյանը, ֆլեյտահար և գեղարվեստական ղեկավար Ազատ Ասլանյանը:

Ինչպես նշում է Սևադա Շհոյանը, մրցույթին մասնակցում էին աշխարհի տարբեր երկրների երաժիշտներ և համույթներ, իսկ ժյուրիի կազմում պրոֆեսիոնալ երաժիշտներ էին, միջազգային կարգի մրցավարներ:

Կուլտուրայի ֆակուլտետի երաժշտության ամբիոնի ուսանողների շարունակական պատրաստվածությունը հաջողությունների հասնելու լավագույն երաշխիքն

ՈՒՍՈՒՑԻՉԸ ՄԵՐ ՀՐՁԱՆԱՎԱՐՏՆ Է

ԲԱՑԱՀԱՅՏԵՑԻՆ ՅՈԹ ԹՎԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ՍՊԻՏԱԿԻ Ալ. Մյասնիկյանի անվան համար 1 հիմնական դպրոցում արտասովոր հաճելի և առանձնահատուկ օր էր: Այստեղ էին հավաքվել քաղաքի գրեթե ողջ մանկավարժական էլիտան, դպրոցի ուսուցչական և աշակերտական անձնակազմը, ծնողները, բազամաթիվ հյուրեր տարբեր բնագավառներից:

Դպրոցի դահլիճում «Խորհրդավոր յոթ» գրքի շնորհանդեսն էր, որի հեղինակն է երկար տարիների մանկավարժական փորձ ունեցող, շնորհալի, տաղանդավոր, նվիրյալ մանկավարժ, մասնագիտական բարձր որակ ունեցող դասվար Արմինե Սամվելյանը: Նա իր «4բ» դասարանի աշակերտների միջոցով ներկայացրել էր գրքի բովանդակությունը՝ կատարելով նախագծային հետազոտական աշխատանք 7 թվի վերաբերյալ: Դասարանը բաժանվել էր չորս խմբի՝ լեզվաբաններ, պատմաբաններ, արվեստագետներ, բնագետներ: Յուրաքանչյուր խմբի հետ հսկայածավալ աշխատանք էր տարվել, մանրազննին ուսումնասիրվել էր տվյալ ոլորտում 7 թվի առկայությունը, կարևորությունը, խորհուրդը, ուժն ու նշանակությունը:

Արմինե Սամվելյանը անհատապես աշխատել էր յուրաքանչյուր խմբի հետ: Ամիսներ շարունակ գրքի հիման վրա նախագծվել և ուսումնասիրվել էր ոլորտները, որի արդյունքում աշակերտները սովորել էին բազմաթիվ հետաքրքրաշարժ նյութեր 7 թվի մասին, կատարել էին ստեղծագործական աշխատանքներ, փորձեր, վեր էին հանվել ազգային բարձր արժեքներ կապված 7 թվի հետ, բեմադրվել էին հեքիաթներ, երգեր և պարեր:

Բեմը աննկարագրելի գեղեցիկ զարդարված էր 7 թվի խորհրդով՝ յոթնագույն ծիածանով, «Յոթնագույն ծաղիկը» մուլտֆիլմի ծաղիկի պատկերով: Բեմում ներկայացված էր աշակերտների անհատական աշխատանքները՝ յոթի տեսքով օրիգամիները, նաև գեղեցիկ ձևով ներկայացված էին յոթ թվի հիմքով նկարված տարբեր կենդանիներ:

Յուրաքանչյուր խումբ առանձնանում էր իր գույնով, կարվել էին վզկապներ խմբերի համապատասխան գույներով:

«Լեզվաբաններ» խումբը հետազոտել էր «Գոյականի 7 հոլովները», աշակերտները ներկայացնում էին հոլովները՝ առանձին-առանձին թվարկելով, թե որն ինչ է ցույց տալիս, բերվում էին օրինակներ: Առանձնացվել էին նաև 7 թվի վերաբերյալ ասացվածքներ, առածներ և դարձվածքներ՝ անդրադառնալով նրանց նշանակությանը: Աշակերտները թվարկում էին նաև յոթ արմատով բառեր՝ նշելով

նրանց բացատրությունը: Ինչպես նաև խումբը կատարել էր ստեղծագործական աշխատանք. հեքիաթ էին հորինել «Ասպետ 7-ը» վերնագրով, հորինվել էին հանելուկներ 7 թվի մասին: Խոսեցին նաև հայկական ժողովրդական հեքիաթներում ներառված 7 թվի այնպիսի հիշատակումների մասին, ինչպիսիք են «7 գլխանի դև, 7 ծովից այն կողմ, 7 սարից այն կողմ, 7 օր ու 7 գիշեր հարսանիք անել և 7 որդով սեղան նստել» և դրանով մեկ անգամ ևս նշեցին 7 թվի պաշտելի լինելը:

«Պատմաբանները» հետազոտել էին «Արարման 7 օրը»՝ առանձին-առանձին թվարկելով ամեն օրվա արարումը: Նրանք խոսեցին աշխարհի 7 հրաշալիքների մասին՝ անդրադառնալով յուրաքանչյուրին և նկարագրելով նրանց հրաշալիք լինելու առանձնահատկությունները: Նշեցին նաև 2007 թ.-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ի որոշմամբ ընտրված աշխարհի նոր 7 հրաշալիքների մասին: Պատմեցին նաև «Արմենպրեսի» կողմից առանձնացված հայկական 7 վանական համալիրների մասին, որոնք խոշորագույնն են մեր երկրում և առանձնանում են ոչ միայն որպես հոգևոր օջախներ, այլև որպես խոշոր մշակութային և կրթական օջախներ: Նրանք նաև գրագետ ձևով ներկայացրին «7 վերք» եկեղեցին՝ նկարագրելով եկեղեցու կառուցումը, արտաքին տեսքը, ինչպես նաև խոսեցին եկեղեցու նկարի՝ 7 վերքի մասին, նշելով վերքերի անվանումները:

Պատմաբանները խոսեցին Սպիտակի ահեղ երկրաշարժի մասին, որն ինչպես գիտենք, ևս կապված է 7 թվի հետ: Պատմեցին զոհերի, անտուն մնացածների, ավերվածությունների, անդամալույծ դարձածների մասին:

«Արվեստագետները» պատմեցին «Համբարձման» տոնի մասին, որը ևս կապված է 7 թվի հետ այն առումով, որ կուլայի մեջ 7 աղբյուրից 7 բուռ ջուր, 7 տեսակ ծաղիկ և 7 տեսակ քարեր են գցում հարսներն ու աղջիկները: Ապա խմբի աղջիկները «Անուշ» օպերայում հնչող «Համբարձում Յայլա» ստեղագործության ներքո ներկայացրին շատ գեղեցիկ պարային կատարում: Նրանք հիշատակեցին մեր ազգային արժեքները՝ խոսելով հայկական հարսանեկան ծեսի մասին, որը տևել է 7 օր և մեկնաբանեցին յուրաքանչյուր օրվա խորհուրդը:

Աշակերտները խոսեցին նաև Պիզայի աշտարակի մասին, որը հայտնի է իր 7 զանգերով, որոնք հարմարացված են երաժշտական 7 նոտաներին: Նրանցից մեկը ներկայացրեց 7 նոտաները՝ թվարկելով դրանք և բացատրելով նրանց հայերեն թարգմանությունը: Շատ ուշագրավ մի բեմականացում ներկայացրեցին երեխաները ցորենի յուրաքանչյուր հասկի մասին, նրանք բեմականացման միջոցով հանդիսատեսին փոխանցեցին, որ ցորենի յուրաքանչյուր հասկի մեջ եղած հատիկներն առանց մնացորդի բաժանվում են 7-ի:

Հատկապես խոսեցին Ապրիլի 7-ի մասին՝ ներկայացնելով նրա խորհուրդը, ըստ որի ապրիլի 7-ը Սուրբ Աստվածածնի Ավետման օրն է և 1995 թվականից սկսած ներառվել է մեր ազգային տոնացույցում:

Պատմեցին «Սպիտակաձյունիկը և 7 թզուկները» հեքիաթի, նաև համառոտ պատմեցին «Յոթնագույն ծաղիկը» մուլտֆիլմի մասին:

«Բնագետներ» խումբը բեմում բացառիկ փորձ կատարեց՝ ստանալով աշխարհի ամենահրաշալի և հետաքրքիր երևույթներից մեկը՝ ծիածանն՝ իր 7 գույներով:

Աշակերտները հետազոտել և գտել էին, որ թվերի անուններում արձանագրված է ՀԱՅՈՒ ԳԱՂԱՓԱՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ըստ որի Դպրությունն է ցիցը հաղթության:

«Բնագետները» խոսեցին աստղագիտության մեջ 7 թվի առկայության և Մեծ արջի համաստեղության մասին, որը պատկերված է 7 աստղերով:

Եվ որ 7 թվի անունը բխում է նրա գրելաձևի մեջ անկյունների քանակից:

Նրանք ներկայացրին, որ մեր հայոց լեզուն և Սասունցի Դավիթ էպոսը գենետիկորեն կապված են Աստվածաշնչի հետ, որ Աստվածաշնչի վերծանության բանալին աստվածային 7 թիվն է:

Աշակերտները պարզել էին, որ յուրաքանչյուր նախադասության, պարբերության, գլխի ու գրքի թվային համարժեքների նիշերի գումարը կամ 7-ի է հավասար կամ յոթնապատիկ թվի:

Աշակերտները խոսեցին կաթնասունների պարանոցային 7 ողների մասին: Պատմեցին 7 թևանի աստղի մասին, որը եղել է գիտության հիմքը, և որը խորհրդանշում է 7 մետաղները, շաբաթվա 7 օրերը և որ դրանք հովանավորվել են 7 երկնային մարմինների միջոցով:

«Բնագետներն» ուսումնասիրել էին թռչնի ձվի կառուցվածքը և պարզել էին, որ այն կազմված է 7 մասից:

Նրանք նշեցին շախմատի 7 ոսկե կանոնների մասին, որոնք չեն առնչվում խաղաքարերի հետ:

Աշակերները ստեղծել էին ուսումնական խաղեր 7 թվի վերաբերյալ, որը նվիրեցին կրտսեր աշակերտներին:

Ամբողջ դասարանով ուսումնասիրել և խաղացել էին հին հայկական խաղը՝ 7 քարը: 7 քարը խորհրդանշում է հայերի պայքարը թշնամիների դեմ ու ցույց է տալիս այն, թե ինչպես օտարները ավերում, փլուզում են մեր բերդերն ու ամրոցները, սակայն մենք կարողանում ենք դուրս քշել հակառակորդին ու ընդգծում հայերի ազգասիրությունը, քաջությունն ու հայրենասիրությունը:

Միջոցառման վերջում աշակերտները ներկաներին բաժանեցին գունավոր թղթերից փոքրիկ քառակուսիներ և աշակերտի ներկայացրած քայլաշարով պատրաստեցին օրիգամիի միջոցով 7 թվանշանը:

Այս նախագծային հետազոտական աշխատանքը աշակերտների մեջ, անշուշտ, ձևավորել էր ակտիվություն, ինքնուրույնություն և հետազոտական, ստեղծագործական ու որոնողական հմտություններ: Զարգացրել էր նրանց ճանաչողական ունակությունները, նպաստել բարոյական արժեքների ձեռքբերմանը՝ սեր հայրենիքի, ազգային արժեքների, հին հայկական մշակութային կոթողների, հնագույն պատմության, բնության և բնական երևույթների նկատմամբ: Այս ուսումնասիրությունը աշակերտներին տվել է կարևոր գիտելիքներ, նաև նրանց մեջ զարգացրել էր վերլուծական կարողություններ, ազգային արժեքները գնահատելու ունակություններ, խմբով աշխատելու հմտություններ, բանավոր խոսքը հստակ և ազդեցիկ ներկայացնելու կարողություն, ինքնուրույն մտածողություն և գործնական աշխատանքում փորձառություն:

Աշակերտները պարգևատրվեցին պատվոգրերով ու շնորհակալագրերով:

Շուրջ երկու ժամ տևած այս հսկայածավալ նախագիծը մեծ տպավորություն թողեց ներկաների վրա: Բոլորն, անշուշտ, շատ բան սովորեցին և միջոցառման վերջում հոտնկայս ծափահարեցին ուսուցչուհուն՝ Արմինե Սամվելյանին՝ այդ ուսուցանող, դաստիարակող և ստեղծարար աշխատանքի համար:

Դպրոցի տնօրեն Մ. Ավետիսյանը հիացմունքի խոսքերով հավաստեց, որ այս գիրքը և նախագծային հետազոտական աշխատանքը շատ երկար տարիներ կհիշվի, քանի որ այն բացառիկ էր իր յուրօրինակությամբ և ուսանելի: Տնօրենը հավելեց, որ այս աշխատանքները բացահայտում են ուսուցչի գիտելիքները, տաղանդը, հմտություններն ու կարողությունները:

«Զգացմունքային խցիկի» վարպետը. Ալբերտ Յավուրյան



Ամենավառ պատկերները

Մի անգամ Աղասի Այվազյանը հետաքրքիր բան ասաց. «Եթե ինձ հնարավորություն տրվեր նորից ապրել, կուզեի մանկության մեջ լինել»: Բայց իմ մանկության տարիները Երկրորդ համաշխարհայինի տարիներ էին, իսկ Լենինականում կյանքը ծանր ու դաժան էր: Սահմանամերձ քաղաք: Անընդհատ սպասում էին, որ Թուրքիան կհարձակվի Սովետական Միության վրա: Ամեն մարդ իրավունք չուներ Լենինական մտնել, լրտես էին ման գալիս: Տղամարդիկ ռազմաճակատում էին: Կանայք փորձում էին ոչ միայն իրենց ծագուկներին անվնաս, կուշտ պահել, տաքացնել, այլև կրթել, լուսավորել: Մենք ապրում էինք մի շատ գեղեցիկ տնակում, որ հայտնի Գեղամովի մենատունն է եղել: Հորս հորեղբայրները հայտնի լուսանկարիչներ էին, որոնք Ալեքսանդրապոլում տաղավար են ունեցել: Նրանք գովազդել են մթության մեջ նկարելու իրենց վարպետությունն ու հայտնի դարձել: Փաստորեն ինչ-որ բաներ արդեն ինձ բնությունից էր տրված:

Հայ կինոյի դժբախտությունը

Բեկնազարյանի ժամանակներից շատ էր անցել: «Հայֆիլմի» արտադրական կարողությունները, մասնագետների ունակություններն ինձ կամաց-կամաց հեռացրին պրոֆեսիոնալիզմից, որովհետև այստեղ միայն արհեստավորի հնարքներ էին պետք: Էս չկա, էն չկա, էնտեղ լուսավորողը քնել է, դիրեկտորը տեխնիկա չի բերել: Այսինքն՝ իմ կենսագրության մեջ սկսվեց պայքար արտադրության դեմ: Չնայած «Մենավոր ընկուզենու» ժամանակ էլ հետաքրքիր բաներ կարողացա անել: Ֆրունզեն այդ ֆիլմում նաև դերասան էր, կադրում էր, և արտադրական ու ստեղծագործական շատ խնդիրներ ես էի լուծում: Այդուամենայնիվ, մտածում էի «Հայֆիլմից» հեռանալու, օպերատորական արվեստից հրաժարվելու մասին… Չկարողացա, որովհետև պահպանողական եմ… Հայ կինոյի դժբախտությունը նաև դրամատուրգիայի բացարձակ բացակայությունն էր: Բոլորը սովետական առօրյայի մասին էին գրում: Ֆրունզն էր մի քիչ դիմադրում, Մալյանն էր կարողանում այստեղից-այնտեղից ինչ-որ բան գտնել: Հիմա, եթե մի քիչ լավ լինեի, կշարունակեի աշխատել, բայց Հայաստանից դուրս: Մինչև անցյալ տարի հրավերներ էի ստանում Թուրքիայից, Հունաստանից, Իսպանիայից: Ստիպված մերժում էի: Այնպես որ, ինչպես աննկատ սկսվեց իմ կարիերան, այնպես էլ շատ աննկատ և բնական ավարտվեց:

Ինձ լավ չեն ճանաչում

Ովքեր իմ անունը կապում են Փարաջանովի հետ, ոչ միայն իմ, այլև հայ կինոյի անցած ուղին չգիտեն: Չէ՞ որ Փարաջանովի հետ աշխատել եմ ընդամենը մեկ ու կես ֆիլմում, ավարտել՝ մեկը: Պարզապես նրա հետ բավական երկար եմ ապրել: Այդպիսին էին կինոարտադրության օրենքները: Չէի ուզում աշխատել Սերգեյի հետ, որովհետև գիտեի, որ բարդ է լինելու, բայց նա համոզելու կախարդանք ուներ: Պատմում էին, թե որքան դժվար է եղել Սուրեն Շահբազյանի համար «Նռան գույնը» նկարելիս: Սերգեյը ֆիլմի նկարահանման ընթացքում կուժն ու կուլան միշտ ջարդում էր օպերատորի գլխին, բայց միակ զավակի անունը դրեց Սուրեն՝ ի պատիվ Շահբազյանի:

Հիմա է Փարաջանովը հանճար: Այն ժամանակ նա պարզապես հետաքրքիր ռեժիսոր էր, բայց հետաքրքիր ռեժիսորներ Սովետում շատ կային: Հիմա է, որ ամեն ինչ ամփոփելով՝ գիտենք. Սերգեյը հանճարեղ ռեժիսոր է: Ինձ համար հաճելի էր նրա հետ աշխատելը: Իմ մեջ սկսված դեգրադացիան կտրուկ կանգ առավ: Ի վերջո, դա միայն տաժանակիր աշխատանք չէր, նաև վայելք էր: Նա այն աճպարարն էր, որ կարողանում էր մարդկանց, առարկաները, կենդանիներին աներևակայելի փոփոխություններ ենթարկել:

Կինը և դանակը

Կնոջս նկարահանման հրապարակում եմ գտել, երբ Կիևում ֆիլմ էինք նկարում: Արդեն քառասուն տարի կինս է: Նա է իմ ամենամտերիմ ընկերը: Կենցաղում բարդ մարդ եմ, սովորությունների գերի: Ուզում եմ, որ անպայման իմ դանակը դրված լինի ինձ մոտ: Իսկ կինս ասում է. «Դանակը դանակ է, ի՞նչ նշանակություն ունի»: Ինձ համար մեծ նշանակություն ունի: Ամեն դեպքում նա այդ ամենը հանդուրժում է: Աշխատանքս փաստորեն քոչվորի աշխատանք է եղել: Մինչև 93-ը, ծննդյանս գրեթե բոլոր օրերը նշել եմ նկարահանման հրապարակներում: Վերջին տասը տարին է, որ վայելում եմ ընտանիքիս անդորրը, և հիմա եմ կարողանում կարգին ու շիտակ գնահատել կնոջս: Գուցե շատ բաներ պիտի տեսնեի՝ չեմ տեսել, պիտի գնահատեի՝ չեմ գնահատել:



Մեջբիս՝ Սերգեյի ձեռքը

«Աշուղ Ղարիբում» այնքան բան կարելի է տեսնել, որ Սերգեյն այդտեղ ոչ մի կապ չունի, դրանք զուտ օպերատորական հնարքներ են: Սցենարում Ղարիբին աղջիկ չեն տալիս: Նրա հետևում պայմանական տնակ է: Պատուհանների վրա Սերգեյը գեղեցիկ խճանկարներ էր ստեղծել: Հասկացա, որ կարելի է ամեն ինչ մթնեցնել, մռայլ սարքել, և այդ գեղեցիկ խճանկարները կերևան: Երբ հերոսին հագցնում էին, լուսավորողները կամաց հանգցրին լույսերը, և ստացա այդ մռայլ, սև պատկերը: Սերգեյն այդպիսի հնարքների հաճախ էր դիմում, օրինակ՝ սպիտակ ուղտը սև էր դառնում, պատերը մթնում էին…

Մենք պետք է ոչ միայն «Աշուղ Ղարիբը» նկարեինք, այլև Լերմոնտովի «Դևը»: Էդ գոմեշները, էդ կովկասյան լեռները, այդ կողմերի աստվածային լույսը: Արդեն շատ հետաքրքիր լուծումներ ու գեղեցիկ գույներ էինք գտել: Բայց «Աշուղ Ղարիբը» ստեղծելիս Սերգեյն այնքան ոգևորվեց, որ «Դևի» մասին մոռացավ: Երբ Վենետիկում ցուցադրում էին «Աշուղը», մենք օթյակում էինք նստած. Սերգեյը՝ մի քիչ առաջ, ես՝ մի քիչ հետ: Հասկանում էի, որ նա է կարևոր: Վերջում բոլորը հոտնկայս ողջունում էին մեզ: Մի պահ ծափահարությունները թուլացան, ապա կրկին ուժեղացան: Ուզեցի հետ գնալ, բայց մեջքիս Սերգեյի ձեռքն էր, ասաց. «Հետ չգնաս, սա քեզ համար է»:

Աստվածային լույսը

Մինչև հիմա ինչո՞ւ է Ջոկոնդայի ժպիտն առեղծված: Որովհետև Դա Վինչիին ոչ միայն վարպետ էր, այլև լույսը գնահատելու շատ սուր և աստվածային աչք ուներ: Այդ նկարում այնպիսի լույս է, որով Ջոկոնդան ստանում է աստվածային ժպիտ, և դա միակ վիճակն է, որը մարդուն առանձնացնում է կենդանական աշխարհից: Այդ գաղտնիքների շնորհիվ է, որ արվեստագետը կարողանում է, աստվածայինը հայտնաբերելով, դառնալ հանճար: Իմ վարպետներից միայն Մոսկվինն էր, որ կարողանում էր լույսն ընկալել: Նա հիշեցնում է Ռեմբրանդտին, որը լույսի հանդեպ առանձնակի գուրգուրանք ուներ…

Վրաստանում լույսն ուրիշ է: Բիտովն իր պատմվածքներում փառաբանում է Վրաստանի լույսը: Ես տեսել էի արևելքի լույսը, բայց չէի ընկալել: Տեսեք՝ Սարյանի գույները որքան զրնգուն ու վառ են, բայց նրա կողքին ունենք Հակոբ Հակոբյան, որի կտավներում բացարձակ գույն չկա: Սա ընկալման խնդիր է: Լույսի շատ ու քիչ լինելն ինձ համար միմիայն գույնով է պայմանավորված: Այսինքն՝ ինչքան շատ լույս, այնքան պարզ և մաքուր գույն: Արևելքի լույսն այդ մանրուքների մեջ է, և լույսի տարածքներում որոնելն ու գտնելը բավական դժվար է, մանավանդ կինոյում: Ի վերջո, ի՞նչ է լույսը: Կյանքի հիմնական շարժիչ ուժն է: Լույսը որտեղի՞ց է գալիս: Այնտեղից… Այնտեղ ո՞վ կա՝ Աստված…

Վարպետի վերջին խոհերը գրի է առել
Հայկ ՕՐԴՅԱՆԸ

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ

Համալսարանի պատմության թանգարանում բացվել է ժամանակավոր ցուցադրություն՝ նվիրված մանկավարժական գիտությունների դոկտոր, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի պրոֆեսոր Ռոբերտ Նիկոլայի Ազարյանին, ով մարտի 4-ին նշեց իր 80-ամյա հոբելյանը:

Պրոֆեսոր Ազարյանը հեղինակ է բազմաթիվ աշխատությունների, որոնք նվիրված են հատուկ խնդիրներ ունեցող անձանց, այդ թվում՝ թանգարանների հարմարեցումը կրթության հատուկ կարիքներ ունեցող այցելուների խնդիրների լուծման հարցին:

Ռոբերտ Ազարյանը բարի, իր գործին նվիրված և աշխատասեր գիտնական է, ով շարունակ զբաղվում է գիտական գործունեությամբ, համալրում համապատասխան մասնագիտության բնագավառը նոր գրականությամբ:

Ունենալով մասնագիտական բարձրարժեք կարողություններ, օժտված լինելով մարդկային հարուստ որակներով՝ պրոֆեսոր Ազարյանը մշտապես վայելում է իրեն շրջապատող մարդկանց հարգանքն ու արժանանում ջերմ վերաբերմունքի:

ՀՊՄՀ պատմության թանգարանի անձնակազմը շնորհավորում է ականավոր գիտնականին՝ մաղթելով առողջություն, խաղաղ և անհոգ կյանք, ինչպես նաև նորանոր հաջողություններ ստեղծագործական կյանքում:

Կարինե ՍՈՂՈՄՈՆՅԱՆ
ՀՊՄՀ պատմության թանգարանի գիտաշխատող

ԴԱՍԱԽՈՍԸ ՈՒՍԱՆՈՂԻ ԱՉՔԵՐՈՎ. ՆԵՐՍԵՍ ՍԱՄՎԵԼՅԱՆ

ԼԱՎ ՈՒՍՈՒՑԻՉԸ ՆԱ Է, ՈՎ ՆՎԻՐՎՈՒՄ Է ԻՐ ԱՇԱԿԵՐՏԻՆ...

«Լավ ուսուցիչ է նա, ով նվիրված է իր աշակերտին, դասին և հայրենիքին». Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի դասախոս Ներսես Սամվելյանը հենց այս տողերով է սահմանում լավ ուսուցչի բանաձևը և անձամբ հետևում այդ այդ կարգախոսին:

Ծնվելով և մեծանալով մանկավարժի ընտանիքում, նա մեծացել է հենց այդ ոգով, մասնակցել մի շարք էքսկուրսիաների, եղել է պիոներական ճամբարներում, որոնք էլ նրա մեջ ձևավորել են կյանքի կարևորագույն նպատակներն ու երազանքը:

Ինչպես դասախոսն է ներկայացնում՝ այդ ամենն իրեն օգնել է տեսնել բնության կատարելությունը և առաջացրել այն ուսումնասիրելու ցանկություն, դե իսկ աշխարհագետի մասնագիտությունը դա լիովին թույլ է տալիս:

Դպրոցն ավարտելուց անմիջապես հետո ընդունվել է Հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմա-աշխարհագրական ֆակուլտետի աշխարհագրության բաժին, երկրորդ կուրսից, ուսմանը զուգահեռ, Երևանի համար 153 դպրոցում աշխատել է իր մասնագիտությամբ (քանի որ այդ տարիներին շատ էր զգացվում երիտասարդ ուսուցիչների կարիքը):

Ավարտելուց հետո աշխատանքի է անցել իր սիրելի դպրոցում, որտեղ ինքն է սովորել և աշխատել շուրջ քսան տարի: Սակայն այս ամենին զուգահեռ, 1997-2002 թվականներին եղել է ֆիզիկական աշխարհագրության ամբիոնի հայցորդ, աշխատելով ու խորանալով գիտական ասպարեզում՝ նա սկսել է աշխատել նաև մանկավարժական համալսարանում: Այժմ մի շարք գիտական ու գիտամեթոդական հոդվածների և ուսումնական ձեռնարկների հեղինակ է:

Այս տարիների ընթացքում կարողացել է ստեղծել սեփական մոտեցումներն ու դասավանդման մեթոդները, որով էլ արժանացել է ուսանողների սիրուն և հարգանքին: Նրա կարծիքով՝ աշխատանքի լավագույն գնահատականն ու արդյունքը ուսանողներն են և շրջանավարտները, որոնց սերնդեսերունդ ճանապարհում է դեպի կյանք: Նրանք իրենց հետ տանում են գիտելիքների այն պաշարը, որ կուտակել են համալսարանում Ներսես Սամվելյանից ստացած գիտելիքներով:

Ուսանողի մեջ Ն. Սամվելյանը կարևորում է ուսման ձգտումը և ընտրած մասնագիտության կարևորության գիտակցումը: Վերջում էլ հավելում է՝ մանկավարժի կոչումը ոչ թե որոշվում է ավարտելուց հետո ստացած վկայականով, այլ իր հոգում եղած արժեքներով ու սեփական որակներով...

Մարիամ ՍԱՐԳՍՅԱՆ

ՆՎԻՐՅԱԼԸ

Նարեկ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Պատերազմը փոխում է բոլորիս ու մեծ հետք թողնում յուրաքանչյուրիս սրտում, սակայն այդ ազդեցության ամենամեծ դրսևորումը դիտվում է հենց առաջնագծում կանգնած մարտիկի հոգում:

Առջևում հայրենիք՝ որը պետք է պահել, թիկունքում հարազատ մարդիկ՝ հանուն որոնց պետք է ապրել: Եվ հենց կյանքի ու մահու արանքում մղվող պայքար, որից կախված են բազմաթիվ ճակատագրեր...

Հենց այս ամենի գիտակցումով ու մեծ պատասխանատվությամբ, պատերազմի առաջին իսկ օրերից սկսած մի շարք քաջ հայորդիներ կամավորագրվեցին և պայքար մղեցին հանուն հայրենիքի:

Այդ քաջերից մեկն է նաև Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի «Կենսաբանություն» մասնագիտության երրորդ կուրսի ուսանող, ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահ, ապրիլյան քառօրյա պատերազմի մասնակից Նարեկ Գրիգորյանը:

«Սա այն բացառիկ դեպքերից էր, երբ զգացողությունս, ցանկությունս ու մտայնությունս մեկն էր՝ ժամ առաջ անդամագրվել հայրենիքի պաշտպանության վեհ ու անձնվեր գործին և կանգնել սահմանում կանգնած զինվորի կողքին»,-ասում է Նարեկը:

Մասնակցելով Զրականի մարտերին, լինելով կռվի թեժ կետերում, անցնելով երկու պատերազմի միջով, Նարեկ Գրիգորյանը ձևակերպել է պատերազմի սեփական սահմանումը. «Պատերազմը մի անմարդկային, չարաբաստիկ ու դժգույն մի բան է, որի պատճառով մարում են բազմաթիվ երազանքներ, նպատակներ ու կյանքեր և թողնում դատարկություն ունայնության մեջ»:

Նարեկը հավելում է՝ անկախ ամեն ինչից, կյանքն առաջին հերթին պայքար է, և մենք պարտավոր ենք պայքարել ու առաջ շարժվել, քանի որ դա է փրկության ու մեր գոյապայքարի միակ ճանապարհը:

Լինելով առաջնագծում, երբեմն նույնիսկ սեփական կյանքի մասին չմտածելով, մարտական ընկերներին փրկելով, տեսնելով շատերի մահ ու հոգում վրեժ պահելով՝ նա կարողացել է մինչև վերջ պայքարել և, ի վերջո, հաղթել մահին:

Սակայն այս ամենը փոխել են Նարեկի աշխարհընկալումն ու նրան սովորեցրել գնահատել ունեցածն ու արժևորել ամեն մի վայրկյանը: Քանի որ մենք այլևս ժամանակ չունենք չարածների համար ափսոսալու և նաև ունեցածը չգնահատելու համար:

Մարիամ ՍԱՐԳՍՅԱՆ
Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի լրատվական հանձնաժողովի ղեկավար

ՆՊԱՏԱԿՆԵՐԻՍ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

Ես Երազիկ Վարդանյանն եմ, Վայոց ձորի մարզի մի գողտրիկ անկյունից եմ՝ Քարագլուխ գյուղից: Սովորում եմ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի մաթեմատիկայի բաժնի 3-րդ կուրսում: Աշխատում եմ «Smart Centre» ուսումնական կենտրոնում ուսուցչուհու մասնագիտությամբ: Արվեստը իմ կյանքն է, և սիրում եմ ստեղծել նորը, տարբերվողը և յուրահատուկը: Նկարել եմ դեռ դպրոցական տարիներից և ամենաշատը դասերիս ընթացքում, երբեմն էլ իմ ուսուցիչներից աննկատ: Ստեղծագործում եմ նաև, «Գրե Լույս» գրական ակումբի անդամ եմ՝ Վարդեր կեղծանվամբ: Այս պահին գրում եմ գիրք արվեստի և կյանքի մասին: Տեղին է հիշել իմաստուններից մեկի խոսքը. «Գործդ արա՛ ու ճանաչի՛ր ինքդ քեզ»: Նկարելը, կարելի է ասել, ինձ համար հոբբի է, սակայն նպատակ ունեմ հետագայում բացել ցուցահանդես: Տարիներ շարունակ նկարում էի սևով և սպիտակով, իսկ առաջին քայլերս գույներով շատ պատահաբար ստացվեց, որովհետև գույն տվեցի բնությանը, ավելի կոնկրետ՝ խխունջների խեցիներին, և բաց թողեցի բնության մեջ...

Նկարում եմ շրջապատումս գտնվող ամեն ինչի վրա՝ քարերի, ծառերի, մեղվի փեթակների, տերևների, հացահատիկների, բրնձի... իմ վրձնով բնությանը նոր շունչ հաղորդելով: Արվեստն արտացոլում է կյանքը, և ինչպես կյանքում, այնպես էլ այստեղ ինձ համար անհանդուրժելի է կեղծ երանգը, կեղծ ապրումը: Յուրաքանչյուր մարդ ծնվում է որևէ գործի համար: Եթե սեր կա՝ ամեն ինչ կստացվի, այսպես է իր կարծիքը բանաձևել Մաքսիմ Գորկին. «Հարկավոր է սիրել այն, ինչ անում ես և այդ ժամանակ աշխատանքը, նույնիսկ ամենակոպիտը կբարձրանա ստեղծագործության աստիճանի»:

Մեր շրջապատում հաճախ ենք հանդիպում այնպիսի մարդկանց՝ նվիրյալ աշխատանքով փառաբանված բանվորի ու շինարարի, իր ողջ գիտելիքներն ու հոգևոր արժանիքները աշակերտներին նվիրաբերող իսկական մանկավարժների, մարդկային երջանկությունը հայրենիքին ծառայելու մեջ տեսնող գիտնականների ու արվեստի գործիչների, որոնք գեղեցկացնում ու հարստացնում են մեր կյանքը, որոնց հետ հաղորդակցվելիս լցվում ես բարությամբ, հավատով դեպի մարդը, դեպի նրա տքնանքն ու արդար վաստակը: Լինելով մանկավարժ՝ ինքս էլ փորձում եմ հնարավորինս բարձր մակարդակով տիրապետել մասնագիտությանս և արժանի լինել մանկավարժի կոչմանը: Բոլորովին պատահական չէ, որ պատմության հեռավոր խորքերից սկսած ժողովուրդը մեծ գործ կատարած հեղինակավոր մարդկանց միշտ ուսուցիչ է անվանել:



«Մաթեմատիկան, բացի գիտությունից, նաև մտածողություն է: Դասավանդելու ընթացքում պետք է փորձել ոչ միայն զարգացնել աշակերտների ակադեմիական գիտելիքներն այդ ուղղությամբ, այլև մտածելակերպ ձևավորել՝ տրամաբանություն, վերլուծություն, քննադատություն: Աշակերտների մեջ զարգացնելով մաթեմատիկական մտածելակերպը՝ նրանց հնարավորություն ես տալիս ողջ կյանքի ընթացքում կշռադատված, վերլուծական միտք ունենալ»,-ինչպես նկատում է մաթեմատիկայի ուսուցիչ Արմեն Մխեյանը:

Մաթեմատիկական գիտելիքներս ավելի զարգացնելու նպատակով որոշել եմ ուսումս շարունակել արտերկրում: Կարծում եմ ամենակարևորը ճիշտ նպատակներ ունենալն է և դրանց իրականացմանը ձգտելու և հասնելու ամենաճիշտ ճանապարհի ընտրությունը:

Երազիկ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի մաթեմատիկայի բաժնի 3-րդ կուրս

Անպառի օրվա հեպքերով

Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմը և ուսանողները մարտի 24-ին այցելեցին Հայաստանի բնության պետական թանգարան՝ մասնակցելու անտառի օրվան նվիրված միջոցառմանը:

Թանգարանի հանրահռչակման և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Գոհար Սամսոնյանը ողջունեց հյուրերին և նշեց, որ համավարակով և պատերազմով պայմանավորված, թանգարանում որոշակի ժամանակ չեն կազմակերպվել միջոցառումներ: Այնուհետև հավելեց, որ այս միջոցառումը կլինի նոր սկիզբ:

ՀՊՄՀ Կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամվել Պիպոյանն իր ելույթում կարևորեց անտառների պահպանության հարցն ու ողջունեց միջոցառման գաղափարը: Այնուհետև զեկուցումով հանդես եկավ կենսաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ Արտաշես Զիրոյանը:

Միջոցառմանը ներկա էին և ելույթ ունեցան Շրջակա միջավայրի նախարարության ենթակայությամբ գործող անտառային կոմիտեի մասնագետ Ռուբեն Պետրոսյանը, բնապահպան Մամիկոն Սահակյանը:

Միջոցառման ավարտից հետո ուսանողները հանդիպում ունեցան նաև երկարամյա մաշկաքանդակագործ, թանգարանի վաղեմի աշխատակից Վարդգես Հակոբյանի հետ, ով ներկայացրեց իր աշխատանքները:

Այցի վերջում ուսանողները Սամվել Պիպոյանի հետ շրջեցին թանգարանում, ուր դասախոսն ուսանողներին ներկայացրեց մի շարք հետաքրքիր մանրամասներ:

Օրն անցավ հետաքրքիր ու նոր ծանոթություններով և հաճելի հուշեր թողեց:

Մարիամ ՍԱՐԳՍՅԱՆ

Բաց դասը նվիրված էր Առնո Բաբաջանյանի 100-ամյակին

Մարտի 21-ին ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոցում հերթական դասընթացներին զուգահեռ տեղի ունեցավ թեմատիկ բաց դաս՝ նվիրված հայ մեծ կոմպոզիտոր Առնո Բաբաջանյանի 100-ամյակին:

Դպրոցի տնօրեն, մանկ. գիտ. թեկնածու Շողիկ Փահլևանյանը դպրոց էր հրավիրել Վարպետի թոռնուհուն՝ Պոլինա Բաբաջանյանին, ով եկել էր որդու՝ Առնո Բաբաջանյանի հետ: Պետք է հավելել, որ նրանք երկուսն էլ սովորել են «Վերածնունդ» դպրոցում:

Հյուրերին ջերմ ընդունեցին դպրոցի սաները, ովքեր պատրաստել էին Առնո Բաբաջանյանի ստեղծագործություններով հագեցած ծրագիր: Մասնավորապես հնչեցին մաեստրոյի դաշնամուրային կտարումները՝ «Մեղեդի», «Վաղարշապատի պարը» և ուրիշ ստեղծագործություններ: Ընդգծենք, որ «Վերածնունդ» դպրոցի այս սաները տարբեր միջազգային հեղինակավոր մրցույթներում իրենց կատարողական արվեստով բազմիցս զբաղեցրել են պատվավոր տեղեր:

Այնուհետև դպրոցի աշակերտներն անակնկալ մատուցեցին հյուրերին՝ կատարելով «Նոկտյուրն» ստեղծագործությունը հայերեն լեզվով (բառերի հեղինակ՝ Վրեժ Շահրամանյան), ինչպես նաև մաեստրոյի այնպիսի երգեր, ինչպիսիք են «Ազգ փառապանծ», «Սիրո երգ», «Երևանի սիրուն աղջիկ», «Երգ առաջին սիրո» և այլն:

Դպրոցի ուսուցիչները Առնո Բաբաջանյանի կյանքի, գործունեության մասին հետաքրքիր դրվագներ ներկայացրին, նաև հիշեցրին, որ Վարպետի անունով անվանվել են համերգասրահ, ինքնաթիռ,

լցանավ, տպագրվել է նամականիշ, բացվել են բազմաթիվ երաժշտական դպրոցներ ոչ միայն Հայաստանում, այլև Ռուսաստանի տարբեր քաղաքներում (Մոսկվա, Կրասնոդար, և այլն):

Հյուրերը հետաքրքրությամբ տեղեկացան նաև, որ ամռանը Երևանում անցկացրած արձակուրդների ընթացքում «Վերածնունդ» դպրոցի սաներն այցելել են «Երևանի խամաճիկների պետական թատրոն», որն, ի դեպ, գտնվում է Մաշտոցի 45 հասցեում, այն շենքի հարևանությամբ, որտեղ ապրել է Առնո Բաբաջանյանը: Նրանք դիտել են «Տրամվայ» ներկայացումը, որի գլխավոր հերոսներից է մեկն է Առնո Բաբաջանյանի կերպարով տիկնիկը:

Ուսանելի ու ճանաչողական հանդիպումն ուղեկցվեց մեծ Վարպետի ստեղծագործությունների ելևէջների ներքո, հյուրերի ջերմ բարեմաղթանքներով և աշակերտների շնորհակալական խոսքերով:

ԿԱՐՈՂԱՆԱՆՔ ՍԹԱՓ ԳՆԱՀԱՏԵԼ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Համավարակ, ամեն վայրկյան վրա հասնող տհաճ, հիմար, վախեցնող լուրեր, ֆինանսական անկայուն վիճակ,անորոշ ապագա, սահմանափակումներ, քննադատություն, աշխարհով մեկ տարածվող սարսափազդու կադրեր. այս ամենին զուգահեռ ոգու տոկունությունը պահպանելն իրականում շատ դժվար է: Մենք ապրում ենք այնպիսի մի ժամանակաշրջանում, ուր հաջորդ օրվա համար ոչինչ չենք կարող պլանավորել, ուր ապրելն ու արարելը այնքա՜ն դժվար է դարձել, այնուամենայնիվ ջանում ենք չկանգնել ու չմնալ նույն տեղում, առաջ շարժվել՝ ժամանակին ցույց տալով, որ հայ ժողովրդին բաժին հասած դաժան օրերն անցյալում թողնելու և հստակ առաջ շարժվելու պահն է հիմա: Երբեք չենք մոռանա ու չպիտի մոռանանք բացվող ամեն մի օրվա համար իրենց կյանքը զոհած զոհածներին, որոնց թիվը, ցավոք, այնքա՜ն շատ է: Այո՛, երախտապարտ լինել, այլ բան չի մնում մեզ:

Փաստ է, որ կորոնավիրուսի տարածումով պայմանավորված ճգնաժամային իրավիճակը թե՛ ամբողջ աշխարհի, թե՛ Հայաստանի կրթական համակարգի համար դարձավ իսկական մարտահրավեր, բայց իր բացասական հետևանքներով հանդերձ, այն դարձավ հեռավար ուսուցման փորձարկումը Հայաստանում: Ինչպես դպրոցներում, այնպես էլ բուհերում, հեռավար դասընթաց կազմակերպելն ինչ-որ տեղ առաջ էր բերում այն միտքը, թե չենք կարողանա լիարժեք ձևով անցում կատարել այս համակարգով դասապրոցես անցկացնելուն, բայց լավատեսության և կամքի ուժի շնորհիվ կարողացանք հարմարվել և առ այսօր շարունակում ենք մեր կրթական գործընթացը հեռավար տարբերակով՝ ինչ-որ տեղ կարոտելով լսարանային շփմանն ու դասագործընթացին: Պետք է նշենք, որ հեռավար կրթության դեպքում ավելի շատ ծանրությունն ընկնում է սովորողի վրա. աշակերտների դեպքում դա ավելի բարդ է. Սովորողները մեծ ծավալի ինքնուրույն աշխատանք պետք է կատարեն, քանի որ ուսուցիչն արդեն հեռու է, և ըստ այդմ, հեռավար ուսուցումը պահանջում է ինքնուրույն աշխատող սովորողներ:

Հայտնի չէ, թե երբ կշտկվի ստեղծված իրավիճակը և շատ կարևոր է, որ մեզնից յուրաքանչյուրը կարողանա իրավիճակը ճիշտ գնահատել և հնարավորինս արագ դուրս գալ ստեղծված դրությունից:

Լիլիթ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ուսանողի օրագրից

Հայրենիքը սկսվում է յուրաքանչյուրիս տնից

Չեմ ուզում գոռալ իմ սիրո մասին,
Սակայն, իմացի՛ր, հայրենիք իմ մեծ,
Քեզ հարյուր տեղով խոցեց թշնամին,
Բայց հազար տեղով իմ սիրտը խոցվեց:

Յուրաքանչյուրիս սրտում մի անգին գանձ կա, և այդ գանձը հայրենիքն է: Ես հաճախ եմ լսում այն հարցը, թե ինչ է հայրենիքը, ինչպիսին է լինում կամ պետք է լինի հայրենասեր մարդը: Եվ ես ունեմ այդ հարցի վերաբերյալ իմ տեսակետը:

Ըստ իս՝ հայրենիքը սկսվում է յուրաքանչյուրիս տնից: Եթե մարդ սիրում է ի՛ր տունը, ի՛ր ընտանիքը, ի՛ր ծննդավայրը, ապա նա պատրաստ է ամեն գնով պաշտպանել այն: Ես չեմ հասկանում այն մարդկանց, ովքեր թողնում են իրենց հայրենիքը՝ արտերկրում ընտանիք կազմելու պատճառաբանությամբ, քանի որ հայրենիքում նոր կազմվող ընտանիքի համար ապագա, պայմաններ չկան: Ախր եթե ամեն մեկս նման պատճառաբանությամբ լքենք մեր հայրենիքը՝ ո՞ւր կհասնենք, և կամ ինչո՞ւ լքենք, եթե կարող ենք ինքներս ստեղծել այդ պայմանները՝ մեր աշխատանքով, մեր կրթությամբ, մեր պատասխանատվությամբ:

Հատկապես հիմա, երբ մեր հայրենիքը զգում է բոլորիս օգնության կարիքը, պետք է կանգնենք մեր հայրենիքի կողքին և նպաստենք նրա զարգացմանն ու հզորացմանը:

Մենք տեսանք դաժան պատերազմ, որը խլեց մեր տղաների կյանքը, բայց նաև տեսանք հայի հայի գովելի տեսակին՝ նրանց, ովքեր ամեն կերպ օգնում էին զինվորներին՝ գումարով, տաք հագուստով, ուտելիքով, աղոթքներով...

Ես իսկապես չեմ հասկանում այն մարդկանց, ովքեր ասում են, թե հայրենիք կվերադառնան, երբ Հայաստանը կզարգանա, կստեղծվեն պայմաններ բարեկեցիկ ապրելու համար: Մինչդեռ հայրենիք պետք է վերադառնալ այն ժամանակ, երբ նա զգում է իր հեռացած զավակների կարիքը:

Հայաստանն անցավ տառապանքի միջով. մենք կորցրեցինք պատմական Արցախի մեծ մասը, և հիմա մեզ մնում է գիտակցել մեր երկրի գինը, ամենայն պատասխանատվությամբ վերաբերվենք ամեն բացվող օրվան:

Յուրաքանչյուրիս ջանասիրաբար աշխատանքով ու համախմբված մենք ոտքի կկանգնեցնենք մեր մի բուռ հայրենիքը: Մենք պարտավո՛ր ենք հզորացնել, շենացնել մեր հայրենիքը և ամուր ոտքերով կանգնել մեր հայրենի հողի վրա, պահել և պաշտպանել մեր երկրի սահմանները՝ հանուն մեր հերոս տղաների, ովքեր իրենց կյանքը զոհեցին հայրենիքի և մեր փրկության համար:

Թամարա ԲԱՐՍԵՂՅԱՆ
Բանասիրական ֆակուլտետ,
1-ին կուրս

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է:
Հղումը պարտադիր է: Թերթը տարածվում է անվճար:
Հանձնված է տպագրության 2.04.2021 թ.

Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝
Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ